

մէջ, կրկիսական խաղուց գաղափար մը տալու համար կոչնականաց: Սովորութիւն էր դարձեալ ունել սեղանոյ վրայ միմոսներ, խեղկատակներ, և սրագլուխ ու երկայնունկն թղուկներ, զորս կ'անուանէին *distorti, mariones*. որոնք մեծաւ մասամբ գերեաց տղաքներն էին, որոց մարմնոյ աճումը կամաւ կ'արգելուին, որպէս զի հրէշաձև կերպարան մ'առնելով իրենց զուարճութեանն իւր ըլլան, ինչպէս պատմէ մեզ Սենեկա:

Դռնապահ գերիներն գիշերները շրջթայով կը կապէին տանը դրան քով, որոց կերակուրն ու բնակութիւնն չէր տարբերէր պահապան շանց կերակրէն ու բնակութենէն: Եւ թէ որ գերի մը անբուժելի կերպով հիւանդանար, Տիբերի վրայ պղտի կղզի մը կը տանէին, ուր երեսէ ձգուած կը մեռնէին:

Գերեաց տրուած տանջանքներն, մարդ չի կրնար լսել ու կարդալ և չսուկալ: Ըստ հաճոյից իրենց տերանցը գաւազանով կը ծեծուէին մինչև ցմահ, բարձր աշտարակէ վար կը նետուէին, կը խաչուէին կամ գազանաց առջև կը նետուէին, և սովամահ կը մեռնէին: Կայսերքն Կլաւդիոս, Ադրիանոս և այլք, ջանացին գերեաց վիճակը բարւոյնելու համար մեղմ օրէնքներ սահմանել. բայց ջանքերնին անօգուտ եղաւ, վասն զի դժուարին էր այսպիսի հնացեալ սովորութիւն մը արմատախիլ ընել: Պէտք էր առ այս քրիստոնէութեան զօրաւոր բարոյական զօրութիւնն, որ վերուց գերութիւնը, և ազատութիւն քարոզեց: Եւ ասիկա քրիստոնէական կրօնից արդիւնք ըլլալն և անտի իսկ յայտ է, որ նախ այն երկիրներէն ու ժողովրդոց մէջէն վերցաւ այս բարբարոսական սովորութիւնը, ուր նախ քրիստոնէութեան գեղեցիկ լոյսը ծագեցաւ. ինչպէս 'ի Հռովմ', յԱրևելս և 'ի Յունաստան. վասն զի կային մինչև մեր օրերը և կան տակաւին այնպիսի երկիրներ, ուր աւետարանին աշխարհօգուտ վարդապետութիւնն տարածուած չըլլալով, կը շարունակեն տակաւին գերեվաճառութեան սովորութիւնը:

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԳ ԿԱՏՈՆԻ ՀԱՄԱՐԱԿԱԼԻ. — Հռովմայեցիք երբ կը պնդէին անգամ մը ժամանակէն դուրս որ ցորեան բաշխուի ժողովրդեան, Կատոն չըջնէր ուղելով անոնց կամքը, այսպէս սկսաւ իր ճառը. «Քաղաքացիք, դժուարին է բան հասկըցնել ուռուցեալ տիկի՝ որ ականջ չունի»:

— Ուրիշ անգամ մ'ալ Հռովմայեցիները ոչխարի կը նմանցնէր, որոց իւրաքանչիւրն առանձին մտածելով, կ'ըսէր, ոչ թէ հովուին, այլ իրենց առջևէն գնացող ոչխարին կը հնազանդին: «Նոյնպէս և դուք Հռովմայեցիք, երբոր մէկտեղ էք՝ կը հետեիք մարդու մը, բայց թէ որ առանձին մնաք, չէք ուղեր մտիկ ընել նոյն մարդուն խորհրդոցը»:

— Կանանց չափազանց իշխանութեան դէմ խօսած ճառին մէջ կ'ըսէ. «Ամենայն մարդ կը կառավարէ զկին. մենք կը կառավարենք զամենայն մարդ, և մեր կանայքն ալ զմեզ կը կառավարեն»:

— Անգամ մը տեսնելով մարդ մը որ կը ծախէր իր հօրենական ստացուածքները, մերձ 'ի ծով, ըսաւ. «Այս մարդը ծովէն աւելի զօրաւոր է. վասն զի այն բանն որ ծովը կամաց կամաց ու դժուարաւ կը մաշէ, սա վայրկեանի մը մէջ կլլեց»:

— Փափկասէր մարդուն մէկը ուղեց բարեկամութիւն կապել Կատոնի հետ. սա մերժեց զնա ասելով. «Չեմ գիտեր ինչպէս ապրելու է այնպիսի մարդու հետ, որուն ապարանքը սրտէն աւելի զգայուն է»:

— «Բարեկամ, ըսաւ Կատոն օր մը եղծաբարոյ ծերու մը, ծերութիւնը ունի արդէն շատ թերութիւններ, հարկ չէ որ նորանոր ախտեր վրան յաւելուս»:

— Անառակ մարդուն մէկը թշնամանելով օր մը զԿատոն, Կատոն ալ պատասխանեց. «Բարեկամ, պատերազմը շատ անհաւասար է մէջերնիս. ինչու որ դուն կը լսես միշտ անմիտ ու անհանճար խօսքեր, և զայնպիսիս ալ ախորժանօք կը խօսիս. իսկ ես տհաճութեամբ կը լսեմ, և ոչ ալ սովորութիւն ունիմ խօսել զայնպիսիս»:

— Կատոն պատերազմական յաղթութենէ մը ետքը բոլոր աւարին մէջէն կերածէն ու խմածէն զատ ուրիշ բան չառնելով, կ'ըսէր. «Չեմ ուղեր նմանիլ այնպիսեաց, որոնք յաղթութիւնը իբրեւ միջոց կը գործածեն հարստանալու. այլ կ'ախորժիմ աւելի մրցիլ առաքինութեամբ լաւ որերոյ հետ՝ քան հարստութեամբ մեծատանց, ու անյադութեամբ ազահներու հետ»:

— Կը պատմեն դարձեալ, որ այս խօսքս ալ ըսած ըլլայ Կատոն, թէ՛ «Շատ աւելի




դժուար է մեր կենացը հաշիւ տալ ուրիշ դարու մարդկանց, քան թէ այն դարուն՝ յորում ապրեցաք» :

— Անգամ մը երբ քանի մ'անձինք զարմանալով հարցուցին Վատոնի, թէ ինչու Հռովմայեցիք 'ի պատիւ իրեն արձան չեն կանգնեցներ, մինչդեռ կանգնած են այնչափ աննշան մարդոց. « Կ'ընտրեմ աւելի, պատասխանեց իրենց Վատոն, որ հարցընեն թէ ինչու համար Վատոնի արձան չէ կանգնուած, քան թէ հարցընեն որ ինչու մէկ հատ միայն կանգնուեր է :

ՈՒՍՈՒՄՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ. — Դաստիարակութիւնը բաղկացնող տարրերն են բոլոր այն միջոցները որք կարեւորք են սովորելու սիրտ ու ընտիր բարք մը կազմելու համար, որովք ձեռնայ բարոյական մարդն : Իսկ ուսումը դաստիարակութեան զանազան մասերէն մէկն է, և կը վերաբերի մտաց, մինչդեռ դաստիարակութիւնը կը բովանդակէ ամբողջապէս բոլոր մեր հոգւոյն կարողութիւնները : Ուսումը կը ծառայէ առ 'ի ճանաչել և առ 'ի գիտել բազում ինչ, իսկ դաստիարակութիւնը առ 'ի բարւոք կեալ, և ահա յայսմ կը կայանայ երկուքին մէջ եղած էական ամենամեծ տարբերութիւնը : Աստուոր մարդու մը համար ուսումէն աւելի փնասակար բան չի կրնար ըլլալ. վասն զի բոլոր գիտութիւնը և հանճարը իբրեւ լուցիկ և առաջնորդ կը գործածէ իր ախտիցը : Գիտութեամբ կրթելը այնպիսի մարդու մը միտքը որ հակամէտ է 'ի չարն գործածել իր գիտութիւնները, ուրիշ բան ընել չէ, բայց եթէ աւազակի մը սորվեցնել զիւրին կերպով դաշոյն գործածել. որով աւելի ճանապարհ բացած կ'ըլլաս վատթարութեան : Այս ճշմարտութիւնը պէտք է շարունակ աչքերնուն առջև ունենան անոնք որոց յանձն է տղոց դաստիարակութիւնը : Բաւական չէ սորվեցնել միայն անոնց թէ ինչ կերպով աշխարհիս մէջ կըրնան պատուոյ ու աստիճանի հասնիլ. պէտք է դարձեալ յաճել անդ հասակի, ընտիր դաստիարակութեամբ ազնուական ու մեծանձն զգացումներ ազդել անոնց սրտին մէջ, որովք միայն կրնան արժանաւոր ըլլալ հասնելու այն պատուոյն և այն աստիճանին : Ուսման մէջ կրնան յաջողիլ, բայց ընտիր դաստիարակութեամբ միայն կրնան երջանիկ ըլլալ :

ԿՐԹՈՒԹԻՒՆ ՄԱՐՄՆՈՅ. — Ըսաւ օր մը եզը ուղտին, իր ճանապարհորդակից ընկերոջը, երբ չէր ուզեր զիւրել քիչ մը իր բեռան ծանրութիւնը. « Շատ աղէկ, պիտի ստի-

պուիս կրելու քիչ ատենէն զիս և բոլորիմ ծանրութիւնս : Վերջապէս ընկճեցաւ եզը բեռան տակ, և խօսքը կատարուեցաւ. — 'Նոյնը ահա կը պատահի և հոգւոյն՝ եթէ չուզենայ ձեռնադրել ըլլալ մարմնոյ՝ թեթեւցընելով անոր բեռան ծանրութիւնը : Վասն զի մարմինն երբ յետ երկար վաստակոց ստիպուի թողուլ զընթերցումն և զուսումն իւր հանապազօրեայ, այն ատեն պարտ է և հոգւոյ մասնակցիլ մարմնոյն ցաւոցը և աշխատութեանցը : Իրաւամբ է ուրեմն Պղատոնի այն խորհուրդը որ կ'ըսէ, թէ պէտք չէ երբեք գործածել զմարմին առանց հոգւոյ, և ոչ զհոգին առանց մարմնոյ, այլ մղել երկուքն ալ հաւասարաբայլ, որպէս թէ ըլլային երկու ձիանք լծեալք 'ի մի և և նոյն կառս :



ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀՈՎՆ. — Կը հանգչիմ անտառին եզերքը. թեատարած եղևինք կը տատանին սեւ սեւ ու վեր 'ի վեր. կը լսեմ արեւմտեան հովերուն ձայնը՝ որ վարսաւոր տերեւոց մէջ կը հառաչեն :

Անուշիկ զեփիւռ. ինչո՞ւ ես ողբաձայն : Միթէ քու բնակարանդ ծաղկանց մէջ չէ՞. միթէ պայծառ յունիսի վարդերն չեն չընչեր ամեն առտու քեզի հետ համբուրուելու :

Քու փառաւոր տէրութիւնդ ամեն դիսփոռած է, 'ի վերայ ընդարձակ հովտաց, կանաչ և զուարթ հովտաց, 'ի վերայ ազատագլուխ բլրոց, որոց ճակատին վերելէն թեթեւ ճերմակ ամպեր կը սահին կ'երթան :

Եւ հոն բոլոր լայնալիր գետն կը թաւալի, բազմաթիւ զով և անոյշ աղբերք կը բըղխեն՝ զովացընելու դքեղ, երբ կէսօրուան արևուն ճառագայթներուն տաքութենէն յօգնիս :

Հովիկ ուրախութեան, մանկութեան և սիրոյ. հոգի՛ նորափթիթ տարւոյ. արեւն վերէն իր կապուտակ սահմաններէն պայծառ ճամբայ մը կը պատրաստէ ուսկից որ դու ուզես անցնիլ :

Հովանոցներէն կը լսուի մեղուին բզզիւն. մանեկաւոր տատրակն շուքի տակ հեծկըլտայ. քու անուշիկ շընչովդ նորափետուր թռչնիկն թևերը կը փորձէ՝ կէս վախճալով կէս ճխալով :

Ա՛հ. դու ալ մեր անցաւոր ազգին կը նմանիս : — Թէ և վշտաց կամ ցաւոց ստուեր մ'ալ բնութեան պայծառ երեսին ծիծաղը չաղօտացընէր, սակայն դու դարձեալ կ'ուզես հառաչել և մրմնջել :



ՀԵՂԵՂ ԿԵՆԱՅ: — Ո՛վ պայծառ հեղեղիկ զաշտաց, որ այդպէս լեցուն և ազատ կը տահիս կ'երթաս. քեզի համար կը դառնան կու դան գարնանային անձրեք. քեզի համար ցօղք ամառուան: Եւ երբ աշնան պաղ եղեմանց տակ մեռնին քու յետին ծաղկունքդ, ձմեռուան աղբիւրներն քեզի համար կը բոցանան, մինչև որ մայիս նորէն դարձնէ բերէ ծաղկոյնները:

Ո՛վ հեղեղ կենաց. դարնան մանուշակն մէկ անգամ միայն կը փթթի քու ափեւրումդ. միայն կարճ ամառ մը քու ճամբուդ վրայ կը փռէ երկնից ցօղերը: Քու ծնող աղբիւրներդ յետ յետ կը քաշուին և կը փակեն իրենց ականակիտ երակները. և ուսկից որ քու պսպղուն հոսանքդ անցեր էր՝ հոն միայն փոշին մնայ:

ԱՆՄԵՂ ՄԱՆՈՒԿ ԵՒ ԶԻՆԱՓԱՅԼ ԾԱՂԻԿ. — Անմեղ մանուկ և ձիւնափայլ ծաղիկ. ի՞նչպէս գեղեցիկ զարդարուած կը փայլիք ձեր նորափթիթ ժամուն, ի՞նչ վայելուչ կը պատշաճին իրարու մաքուրն և սիրունն, անբիծն ընդ անբրծին, և անուշակն ընդ անուշակին: Այն դեռափթիթ ճերմակ թերթից նման են քու մատաղ սրտիդ թերթերն ալ. յանցաւոր կիրք և վիրաւոր հոգք՝ հոն չեն ձգած իրենց սպին:

Ո՛վ պարզամիտ. թէպէտ և հիմայ այդ ճերմակ բողբոջին վրայ խնամոտ աչքով մը կը նայիս, քիչ ատենէն պիտի ձանձրացընէ նա քու մանկական աչկունքդ. թէպէտ և գեղեցիկ է՝ բայց դու մէկդի պիտի ձգես զայն:

Զգէ՛ զայն մէկդի, երբ որ ձանձրանաս. ձգէ՛ ի գետին գեղեցիկ ճերմակ ծաղիկը: Բայց երբ քու մատաղ տարիներդ ալ թօթափին՝ բռնէ ու պահէ այն անմեղ և ձիւնափայլ սիրտը:

ՊՐԱՅԵՆԴ

— Յարմար ժամանակ մատուցուած ծառայութիւն մը թէպէտ փոքր, թէպէտ չընչին ըլլայ, կրնայ մոռցնել տալ ամենամեծ նախատինքն և թշնամութիւնն:

ԹՈՒԿԻԴԻՏԷՍ

— Վտանգի մէջ իյնալէն առաջ, պէտք է նախազուշակել զայն և զգուշանալ. բայց համարելով թէ դիպուածով իյնաս, հարկ է անկէ վերջը արհամարհել զայն, և ոչ թէ շփոթիլ:

ՖԵՆԵՐՆ

— Խիստ և դառն խորհուրդներն ու խրատներն երբեք բարի արդիւնք չեն կըրնար ունենալ. այլ մուրճի կը նմանին, որ երբ կը բախին սալին՝ կը վանին անկէ:

ՀԵԼՈՒԵՏԻՈՍ

— Յիշողութիւնը մատենի մը կը նմանի, և ինչպէս փոշւոյ տակ մնացած մատենան մը պէտք է պարզել երբեմն, որպէս զի բուրովին չի խանգարի. նոյնպէս և մտաց թերթերը ցնցել երբեմն, որպէս զի պէտք եղած ժամանակ առողջ վիճակի մէջ գրուներք զայն:

ՍԵՆԵԿԱ

— Երբեմն թերևս սիրտդ կամ հոգիդ մեծ վառեալ և ընդարձակ էր. անանկ որ բոլոր տիեզերք կրնար տեղի գտնալ՝ ի նմա. բայց պզտիկցաւ և խեղճըցաւ քանի որ սկըսար չսիրել զայլ ոք բայց եթէ դքեզ:

ՇԻԼԷՐ

— Ի՞նչ կը նշանակեն արդեօք երջանիկ ժամանակի մը փափաքներն ու ակնկալութիւններն: Կը բարւոքեմք զժամանակն եթէ դիտնամք բարւոք գործել. աշխատութիւնը մխիթարութեան պէտք չունի: Նա որ կեայ յուսով՝ ի վտանգի է մեռանելոյ ի քաղցոյ:

ՖՐԱՆԿԼԵ

— Ունիս սրտի ցաւ կամ նեղութիւն, դիտէ կամ երեւակայէ անմեղ տղայ մը որ կը քնանայ. և կը տեսնաս որ ոչ մի ինչ անձկութիւն, ոչ մի ինչ երազ կը խռովեն զնա. և ահա սեփականէ և դու քու անձիդ անոր անմեղութենէն մաս մը, և կը հանդարտիս և ոչ մի ինչ կրնան խռովել զքեզ այլ ևս:

ՇԱՐՈՊՐԱՆ